

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843 - 1947
105-րդ Տ Ա Ր Ի



ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ
ԹԻՒ 7-8

ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ «ՀԱՅԿ ԴԻԻՑԱԶՆ»Ը

(Շար. բազմ. 1947, թիւ 5-6, էջ 120)


ՀԱՅԿ ԴԻԻՑԱԶՆԸ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ.

Հայկ Դիւցազնը նկատուած ինքնիր մէջ, իր նիւթի մշակումին և գեղարուեստական բնոյթին մէջ՝ զրական արտադրութիւն մ'է բացարձակապէս և ինքնուրոյն գործը Բագրատունիին՝ իր գեղեցկութիւններով և թերութիւններով: Կրած բոլոր ազդեցութիւններուն վրայ կը տիրապետէ անձնականութիւնը ամէն բանէ առաջ, որուն թերահաւատները կը հրաւիրենք համեմատական ուսումնասիրութիւններու՝ այն ձեւով և ուղղութեամբ, զոր ցոյց տուինք մեր յօդուածին նախընթաց մասին մէջ:

Այդ գործին արժէքը վիճուած է միայն անոր երեւնալէն շատ տարիներ վերջ՝ երբ դասական ըմբռնումները և ճաշակը տեղի տուն նոր ժողովրդական ճաշակին և ձգտումներուն՝ անկումովը զբարարի: Բայց այդպէս չընդունուեցաւ ան իր սկզբնական մուտքին հայ զրական աշխարհին մէջ. Պէշիկթաշեան և Սր. Հէքիմեան նկատեցին զայն որպէս իսկական յայտնութիւն

մեծատաղանդ զրչի մը, որ արդէն իբրեւ մեծ քերականագէտ և մեծ թարգմանիչ պարտադրած էր ինքզինքը իր դարուն բոլոր հայ հեղինակներուն վրայ:

Այն տեսակէտը թէ ժողովրդական ոգին, մտայնութիւնը, երգուած հին կեանքի մը բարախուն կենդանութիւնը և իրականութիւնը կը պակսի հոն, և այդ պատճառաւ իրը ազգային դիւցազնագործիւն կեղծ է, ու անկենդան (ինչպէս Օշական կը պնդէ), չի քանդեր գործին զրական արժէքը. վիր-գիլիոսի Լեւեականն ալ ութ դար վերջը զրի առնուած է և Լեւեասեան դարու բարեբը անձանթ էին իրեն ալ, Գրախտ կորուսեալը գուտ երեւակայութեան գործ է և աստուածաշնչական տուեալներու վրայ միայն հաստատուած. բայց անով չեն կորսնցներ անոնք իրենց զրական յաջողութիւնը, որքան ալ չհաճի Օշական այդ հրաշարուեստ արտադրութիւններուն: Գրական գործի մը յաջողութիւնը ստեղծագործութեան մէջ կը կայանայ, որով բանաստեղծը գիտէ վերաբառադրել կեանքը,



բեմադրել զայն, ստեղծել տեսարաններ, պատկերներ, տիպարներ և գործողութիւն ու շարժում դնել հոն: Բազրատունիի եւ բեականութիւնը տուած է մեզի այդ բոլորը, ջանալով մօտենալ որքան հնար էր իրականին, պատմականին. իր գործը սակայն պատմագրութիւն չէր, այլ վէպ մը, դիւցազներգութիւն մը ուր աւելի բաժին պէտք էր ունենալ երեւակայութիւնը քան թէ պատմական փաստաթուղթը: Իր գործը, միւս կողմէն, և ոչ ալ բոլորովին պատմականէ հիմնագուրկ կեղծիք մ'է, որովհետեւ ան գիտցած է գործածել աւանդութեան ձայնը դիմելով պատմական աղբիւրներու՝ Աստուածաշունչին, Խորենոսացիին, Մէրէասին, Թ. Արծրունիին, Մ. Կաղանկատուացիին, Մ. Ասորիին, Վարդան Բարձրբերդցիին, անուն մը, պարագայ մը գտնելու համար անոնց քով, կազմելու համար պատմական շրջանակը. իսկ մնացածը ամբողջապէս վիպականը, բանաստեղծականը, նկարագրականը արդիւնք են իր երեւակայութեան ստեղծագործական տաղանդին: Ան կառուցած է ամբողջութիւն մը, որուն զանազան մասերը զիրար կը բռնեն և մեզի կու տան հին դիւցազնական կեանքի մը սխրագործութիւնները և ոգին: Ու մենք ընթերցումով իր դրուագներուն կը զգանք փոխադրուած նահապետական շրջաններուն և կ'ունենանք անոնց բարքերուն, կրքերուն, զգեստաւորումին ու կեանքին իրականութեան պատրանքը:

Այս ամբողջ հսկայ կառուցուածքին մէջ Բազրատունի չի կորսնցներ միութեան մտահոգութիւնը. Հայկ Դիւցազի դիմագիծը որպէս տիրող և կառավարող ամբողջութիւնը՝ պահուած է ճարտարօրէն գործողութեան բովանդակ ընթացքին. ամէն ինչ հոն Հայկին շուրջ և Հայկին համար է և կը ձգտի անոր գլխաւոր նպատակին՝ որ է մղել ճշմարտութեան և կրօնքի պատերազմը: Շարժումը և գործողութիւնը կարծես բիշ մը կը դանդաղին յետ Գ.

Դրուագին երկար ճառերով Բիւրասպի, Նոյի (որ կը բռնեն Գ. և Ե. Դրուագները), բայց վերստին կը տաքնայ յաջորդներով, մանաւանդ Ժ. Դրուագէն վերջ՝ առնելով իր բուն արագութիւնը դէպի վախճանը:

Միջադէպեր չեն պակսիր, ընդհուլուած գեղեցկօրէն այդ ամբողջին. Ապահի միջադէպը, դարձը առ հայրը, մարդախոշոր հրէշի մը պատմութիւնը (Դր. Թ.), Բորանէի պատահումը Ապահին (անդ), որսորդութեան դրուագը (Չ.), Դանան հովուի խրճիթին մէջ տրուած հիւրասիրութիւնը (անդ), ուր գեղջուկ կեանքի պատկերը կը գտնենք նահապետական պարզութեամբ և քնականութեամբ. նման պատկեր մը գծուած է նաեւ Ժ. Դրուագին մէջ՝ երբ Բեբոր (կին Ապահի) կը հասնի գիւղացի ընտանիքի մը մօտ հանգչելու և կազդուրուելու: Այս ամէնը կու տայ զանազանութիւն և հաճելի բնոյթ ընդհանուր նիւթին:

Հայկ Դիւցազնի ընդարձակ ծաւալը չի թոյլատրեր անշուշտ իսկոյն թափանցելու անոր ներքին յօրինուածքին գեղեցկութեան. հարկ է ընտանենալ նիւթին, լեզուին, հանդարտ ու անկողմնակալ ընթերցումով և մէկէ աւելի անգամներ կրկնելով զայն: Այն ատեն միայն կարելի է զգալ հրապոյրը այդ հսկայ և հոյակապ գործին որ հիացում պատճառած էր ժամանակին Պէշկիթաշլեանի և Սր. Հէքիմեանի պէս գեղապաշտ ու արուեստագէտ մտքերու: Հոն անտարակոյս ամէն ինչ գեղեցիկ չէ, կան նաեւ անբնական մասեր, երկար ու յապաւելիք կտորներ (որոնց մասին աւելի ուշ), սակայն դիտելու է ամբողջութեան մէջ քերթուածը: Այդ գործը դասական գործ մ'ըլլալուն՝ պէտք է մի միայն նկատուի քննադատէն զասական քերթուածներու պահանջներուն և յատկութիւններու տեսակէտին տակ. հոն փնտռել ներկայ բանաստեղծութեան ճաշակն ու ըմբռնումը՝ սխալ՝ մեթոտ մը պիտի ըլլար անշուշտ, ինչպէս կ'ընէ Օշական, որ չի կրնար

կարդալ և կամ կը կարդայ մտքի բըռնուածութեամբ մը միայն, իրրեւ անբնական, անժողովրդական գործ. միեւնոյն վերարեմունքը ունի ան նաեւ Թասսոյի, Վիրգիլիոսի և Միլտոնի գործերուն հանդէպ:

Բազրատունի՝ զասական ոճին վարպետը մեր մէջ՝ կը հիացնէ մեզ անժխտելիօրէն իր նկարագրութիւններով, իր ստեղծած պատկերներով, կենդանագիրներով. այս կէտին մէջ քննադատելի շատ բիշ կողմեր ունի: Գեղեցիկ են պարզապէս Նաւասարդեան տօներու նկարագիրը (Դր. Ա), Դեւերու ժողովը (Գ), բնութեան ուժեղ տարրերու, փոթորիկի (Չ), ծովամարիկի (Ժ) նկարագրութիւնները Հայկակի մահուան դրուագը (Ը), պատերազմական բախումներու նկարագրութիւնները (Ե. Ժ. Ժ. Ժ. Ժ.), գիշերային հսկումը վիրաւոր Հայկի վրանին վերեւ (ԺԲ), գիշերային դաւադրութիւնը (անդ), գիշերային արշաւանքը Հայկանոյշի ազատութեան համար (ԺԳ. ԺԵ), Վախտանգի և Վարդենի տգեղութեան իրապաշտ նկարագրութիւնները (ԺԵ), Բիւրասպի կախարչութիւններու պատկերը հրապուրելու համար Հայկանոյշը (ԺԸ), մարդագոհի տեսարանը (անդ) եւայլն:

Ըսուած է յաճախ թէ Բազրատունի, որքան որ ճարտար նկարագրող արտաքինի, նոյնքան տկար է թափանցելու ներքին, հոգեկան վիճակներուն: Սխալ դատողութիւն մը, որ կը հերքուի իսկոյն երբ չմօտենանք անոր կանխակալ կարծիքով, և միւս կողմէն ուզենք տեսնել իրական գեղեցկութիւնը որ կայ հոն: Հայկ զիւցազի մէջ հերոսի խրոխտ նկարագրին հետ ի յայտ կու գայ գործվածից հայրը, նախ իր Հայկակ որդւոյն մահուան և ուրիշ պարագաներու առթիւ, ինչպէս նաեւ ներդաւիտ ու վսեմ մարդը Վստամի դէմ սարքուած դաւադրութեան մէջ, ուր վիրաւոր Հայկ իր թիկնապահներու օգնութեամբ կը վազէ խռովութեան վայրը ազատելու իր ռիսկի մը սուրբութեւ վրէժին:

Դրութենէն՝ ցոյց տալով այսպէս իր հոգեկան մեծութիւնը. այդ տեսարանը Դիւցազնեղութեան ամէնէն յուզիչներէն է (ԺԳ): Զգացումի էջեր են Հրանտի ողոր Հայկանոյշի կորուստին վրայ (անդ), Ապահի գործը իր ձեռքով ինկած Բորանէի դիակին առջեւ (Ժ), Բեբորի սրտայոյզ ողոր իր բրոջ մահուան վրայ (անդ), Թասմիրի ցոյց տուած խանդաղատանքը Հայկանոյշի հանդէպ (ԺԸ), Հայկանոյշ Բէլի ատեանին առջեւ (ԺԵ), եւայլն, բոլորն ալ յուզումի և զգացումի տեսարաններ: Բազրատունի նոյնիսկ Յոսիկին մէջ (Հայկի ձին) յաջողած է դնել զգացում, որ կը վազէ հսկելու իր վիրաւոր տիրոջ վրանին վերեւ (ԺԲ):

Ասկէ կը տեսնուի թէ տիպարները զոր ստեղծած է ան՝ չեն նմանիր կճեայ արձաններու, անհոգի, աննկարագիր մասկոյտերու՝ գուրկ անհատականութենէ. այնքան յայտնի և ճիշտ գիծեր ունին անոնք՝ որ ընթերցողը կը կապուի հոգեպէս անոնց հետ. կը սիրէ Հայկը, կը սիրէ Հայկանոյշը, կը սիրէ Հրանտը, կ'ատէ Վստամը, Բիւրասպը: Ու իւրաքանչիւրին այդ դիմագծերը պահուած են անփոփոխ և նոյն ամբողջ քերթուածի ընթացքին: Հայկ միշտ քաջութեան, վսեմութեան, վեհանձնութեան, ազնուութեան և հայրականութեան տիպարն է. Հայկանոյշ միշտ նոյն գործվածի աղջիկն է, դիւցազն հօր դիւցազնուհի աղջիկը, հրաշագեղ իր հոգիով և արտաքինով. Հայկանոյշ չի նմանիր Թասսոյի Կլորինդային կամ Երմինիային, խառնուրդ մըն է նէ գործվի և արիութեան, բարութեան, մաքուր սիրոյ և առաքինութեան, աննենգ ու անկեղծ: Առհասարակ Հայկ Դիւցազնի կիները Արուսեակ, Բեբոր, բոլորն ալ կիներ են իրենց կանացի շնորհալի փափկութեան մէջ: Վստամ խիզախ, յանդուգն ու փառասէր իշխանի տիպար է, Հրանտ՝ քաջի ու ճշմարիտ սիրողի դիմագծով (թէեւ առաջին դրուագներուն մէջ քիչ մը անտեսուած) որ

կը յայտնէ բուն ինքզինքը՝ երբ վերադառնալով զիշերային արշաւանքէն չի գտներ իր սրտին սիրածը, ու հոգւոյն զայրոյթը կը վազէ թափել վստամի վրայ, համարելով զայն միակ պատճառը Հայկանոյշի կորուստին։ Այստեղ Բագրատունի տուած է իր ամէնէն զեղեցիկ պատկերներէն մին՝ ուր սէրը, զայրոյթը և կատաղութիւնը տիրապետած են խելացնոր Հրանտին վրայ։ Ժխտական ուժեղ տիպար մ'է Բիւրասպ, որուն մէջ հակադրութեամբ Հայկանոյշի անմեղութեան և զեղեցկութեան, անձնաւորուած է կիրքը, անկարգ ցանկութիւնը։

Բագրատունիի գործը հետեւաբար լոկ արտաքին նկարագրութեանց մէջ չի ամփոփուիր. հոն կայ կեանք, զգացում, շարժում, տառապանք, սէր, կիրք և հեղիւնակին քով ալ բեմադրելու կարողութիւն, որ գիտէ այդ բոլորը կենդանի ոճով վերածել իրականութեան ազդելով մեր աչքին, մեր հոգւոյն և ճշմարտամանուլութեամբը նաեւ մեր մտքին։

Ինչ ըսել լեզուական յաջողութեան մասին։ Ատիկա անգերագանցելի առաւելութիւնն է Բագրատունիին։ Ան խտացուցած է հոն կատարեալ ինքնագիտակցութեամբ մը բովանդակ ճոխութիւնը հայերէնի ու Ե. դարէն մինչեւ իր օրերը հասած հարստութեան, բայց չկարծուի որ ստեղծած է անգոյն խառնուրդ մը զանազան դարերու լեզուներուն՝ ձուլումովը այլեւայլ դպրոցներու ուրոյն նկարագրին։ Այդ լեզուն իրն է զեղեցիկ, շքեղ, հոյակապ, իր անձնական ստեղծագործութիւնը, ուր կը տիրէ խիստ պահանջկոտութիւն և նուրբ ճաշակ ընտրութեան, դասաւորումի և արտայայտութեան եղանակին։ Ան տէր է հայերէնի բոլոր բառամթերքին, դարձուածքներուն, ինքնիսկ կը կերտէ բառեր գործածելով զանոնք իւրաքանչիւրն իր պատշաճ տեղը։ Ասով Հայկ Դիւցազներ կը դառնայ հայ լեզուի շտեմարանը գործնականին մէջ, ինչպէս իր Ի պէտս զարգացեալ քերականութիւնը օրէնքներու ամբողջութեամբ։

Թեան շտեմարանը տեսականին մէջ։ Այդ զոյգ գործերը հետեւաբար պիտի մնան հայ լեզուի խոր անդունդները լուսաւորող երկու հսկայ ջահեր, զոր հայերէնի տիտան վարպետը գաղափարը ունեցաւ վառելու օր մը հայ զրական սերունդին համար։

Բագրատունի իսկապէս արուեստագէտ մ'է մեր լեզուին, մոգը որ գիտէ գործածել զայն իր ձեռքին մէջ դիւթական գաւազանին նման՝ տալով անոր ամէն ձեւ ու կերպարանք, դարձնելով զայն ճշմարիտ թարգմանը իր գաղափարներուն, բնութեան երեւոյթներուն, բնութեան ձայններուն. ասով կը ստեղծէ բառախաղեր, նմանաձայնութիւններ, որոնք առաջին անգամ իրմով յայտնուեցան մեր մէջ, հիացում ներշնչեցին և ուրիշներ փորձուեցան նմանիլ անոնց՝ առանց յաջողելու։ Ան շուշտ այդ խաղերը պիտի զանգեցնէր իր համար անկարելի տարրեր, սակայն յայտանիշ են հեղինակին լեզուական խոր հմտութեան, և ոչ մէկ կերպով կը կազմեն թերութիւն, ինչպէս ուզած են խորհիլ ոմանք։ Անուններու բառախաղեր են։

«Անուն իւր վէս ապրտամբ, բուսոյ բարուցն արդիւնք վրկայ (վստամ անունին, գր. ԺՊ)»
 «Եւ Ապահն անուն հըզօր անդ զառաջինըն ծանեաւ զահ» (Ապահ անունին, գր. Թ)։

Գաւազանի շաչիւնը լսել կու տայ նմանաձայնութեամբ՝ երբ կ'ըսէ.

«Ճօճէր ճոկանըն ճապուկ ճախր ի ճակատըն ճեմելով» (Պ)։

Եւ կամ թիթեռնիկի մը թեւահարումը.

«Որ զթռչնիկըն թիթեռնիկ թեթեւ թեւօքըն թրթռուն» (Պ)։

Նմոյշ մը իր նմանաձայն նկարագրութիւններէն, ուր կը պատկերացուի գլխուրական պատրաստութիւնը.

«Թնդէն գարբնոցք գոգաւորք, ընդ կռանաց թոպ թառանչեն սալք»
 Զուլին կոփին կըռին զէնք, քան Ժողովին ի Հայկաշէն։

Սուսեր, տէգք և նիզակք՝ արեան՝ մարտիցըն ծարաւիք,
 Կապարճք օրհասաբերք, զըրահք, ասպարք և սաղաւարտք
 Արի որդւոյն Թորգոմայ ի դաստակերտըն մըթերին» (Ա)։

Աւելի հնչուն և կատարեալ նմանաձայնութիւն է հետեւեալը, ուր զգալ կու տայ ձիերու քառատրոյի վազքը և տազնապը անտառի էրէններուն.

«Հայկեանց ցրուեալ ի մայրիսն յայսկոյս յայնկոյս յառաջս յառաջս,
 Ի հաջիւ հետազօտել շանց՝ ի գորդից ասպատակին
 Դոստուցեալ բոյլք էրէոց վազէն վարդին ի վեր ի վայր։
 Անդ բառատրոյի գըռոյթ, անդ գոռ, անդ ոտն ի գոփ, մըկունդ ի կոփ.
 Թունդ առ անտառ, բոմբ ի բոմբիւն թումբ ի թմբիւն քանդք արձանաց» (Զ)։

Բայց ինչ որ իսկապէս հիանալի է Հայկ Դիւցազնի լեզուին վրայ՝ զանազանութիւնն է գոյնի և արտայայտութեան եղանակին։ Այդ լեզուն տեղ տեղ ընտանի և պարզ է, վճիռ ու կուռ զեղեցկութեամբ մը, երբ քերթողը կը պատմէ. կ'առնէ շքեղ ու հանդիսաւոր կերպարանք՝ երբ կը նկարագրէ հաճելի դէմքեր ու երեւոյթներ, երբ կը խորհրդածէ և կամ երբ կը պատկերացնէ բնութեան պահեր ու տեսարաններ. կը դառնայ ուժեղ, պատկերաւից, ու առնականօրէն իրիստ զօրաւոր՝ երբ դժոխքի զօրութիւնները, պատերազմական ընդհանրութիւնները կը նկարագրէ, և կամ բնութեան ահաւոր տարրերու պատկերացումը կ'ուզէ տալ մեզի, ինչպէս է փոթորկի, ծովամարիկի նկարագրութեան մէջ. այս տեւակէտով յատկանշական են զագրաթորմի վախտանգին և հերատուկ վարդենիի կենդանագիրները, ուր զիտելի է մանաւանդ բառերու ընտրութիւնը և իրապաշտ վրձինը հեղինակին։

Թ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր Ը .

Գրական քննադատութեան պարտքն է վեր հանել նաեւ թերութիւնները։ Բագրատունի ընդհանրապէս ձգտում ունի իր նիւթը երկարօրէն ընդլայնելու. այս իր զլիաւոր թերին է որ թէեւ ամէն տեղ չի յայտնուիր, սակայն ընդհանուրի մէջ կը ծանրաբեռնէ այդ գործը։

Ամէն բանէ առաջ կը զգացուի այդ թերութիւնը առեւտրականական և եկաւրադրարիւններու մէջ, ուր կ'իջնէ չափազանց մանրամասնութիւններու։ Նկատենք իր Գ. և Ե. դրուագները։ Ե. դրուագի առաջին մասը կը զրաւէ աշտարակաշինութեան պատմութիւնը և աստամբութիւնը Բէլէն՝ պատմուած Հայկէն. կարելոր պահանջ մ'է անտարակոյս այդ պատմուածքը իր դիւցազներգութեան համար, սակայն աւելի ամփոփ և հետաքրքրական ոճով կատարուած ըլլալու էր։ Գ. դրուագը նոյնպէս կրօնական դիւցազներգութեան մը համար, ինչպէս է Հայկ Դիւցազներ, հարկաւոր պահանջ մըն է անշուշտ, սակայն կը պարունակէ ճապաղութիւններ, անբնականութիւններ. հոն կը նկարագրուի Բէլէն կողմէն առաքուած պատուիրակութիւնը՝ որուն զլուխ են Բար (որդի Բէլի) և Բիւրասպ կախարդ իմաստունը (կրօնապետ Բէլի աստուածութեան). մոտքը, սկզբնաւորութիւնը զեղեցիկ՝ բայց յետոյ կը սկսի ճապաղեալ։ Բիւրասպի բերանը զրուած է իմաստասիրական երկար ճառ մը, որուն պատասխանելու անկարող զիրք ունի Հայկ որ մի միայն կը զայրանայ և նիզակի ծայրը ցոյց կու տայ իրրեւ ըստ պառնալիք։ Անշուշտ աստուածապաշտ դիւցազի մը զայրոյթը կը զրգոն անկրօն խօսքեր, բայց այդ չի բաւեր, հարկաւոր էր հակաճառութիւն մը տաք ու զօրաւոր, որուն պէտք էր յաջորդէր յայտարարութիւն պատերազմի։ Երբ զեպանները դուրս կ'ելլեն ատեանէն, այն ատեն միայն խօսք կ'առնէ Նոյ ալեգարդ նահապետը, —

երեսպաշտութիւն, ամենամեծ նախատինք է նկարագրի մը հանդէպ որ համակ ուղղամտութիւն է, ճշմարտութիւն և անկեղծութիւն: Ան ոչ միայն մեծ գրագէտ, այլ նաեւ զարգարուած ընկերային առաքիչ-նութիւններով՝ եղաւ մեր մեծագոյն գործիչը թիւ դարուն, որ առաքեալի մը պէս անցաւ, սիրեցով իր շուրջը սէր, եղբայրութիւն, շնորհ և ազնուական գաղափարներ: Ան զարգացած միտք մ'էր աւելցնող գրականութեան նուրբ ճաշակով և գեղեցկագիտութեամբ, հասու և թափանցող գրական գեղեցկութիւններու, որուն ապացոյց են իր վմայլելի և նրբաւրուեստ գրաբար եղբերգութիւնները: Եթէ ուրեմն այսպիսի միտք մը կ'արտայայտուի նպաստաւոր շեշտով Բագրատունիի գործին մասին, կը կարծենք որ ուրիշ մտքեր՝ որ չունին անոր գործութիւնը և դատելու կարողութիւնը, պէտք են չափաւորել իրենց անգիտակից դատաստաններուն յանդգնութիւնները:

Սրապիոն Հէքիմեան, ուրիշ գեղեցկագէտ մը, 1852-ի վերջերը 13 Գեղտեմբերին կարգաւորվ ձեռագիրը՝ կը գրէ հեղինակին իր կարծիքը, որուն ահա գլխաւոր մասերը.

«Արդեւք քաջութեանց զիւցազանցն երգելոց ի նախնեացն ի Հոմերոսէ և ի Վիրգիլեայ, միայն առ սեփական ազգս իւրաքանչիւրոցն վերբերին: Իսկ յԵրուսաղէմն ազատեալ խոնին ազգք համօրէն և եւանեն ի ճակատ, այլ ի սէր եւեթ կրօնից: Հայկ մարտնչի և կրէ վիշտ սակա ազատութեան և կրօնից համօրէն աշխարհիս, ուստի և բանք զնմանէ սիրելիք և հաճոյազոյնք, ոչ Հայագեաց եւեթ, այլ համօրէն հեռեւորացն ճշմարտութեան և ազատասիրաց:

Ամենայն գէպք վիպիգ հիւսեալ են և եղեալ ըստ կարգի պարզութեամբ և առանց ինչ յաւաքութեան անօգուտ պարագայից, որով և ոչ ուրեք տաղտկալի...:

Ձեք ինչ գրուագ որ արդեւուցու զընթացս գլխաւոր գործողութեանն, և չեցէ կապակցեալ ընդ նմին: Ամենեքեան առհասարակ բերեն զտիպ

մեծի հանճարոյ: Չգիտեմ թէ երկուսցն՝ որ դասել ընտրելագոյն զգրուագն Ապահոնեաց քան զնկարագրութիւնս գիւթեալ պաշտառն Արմիտայ, և զնոյն իսկ մահ Բորանէի քան զմահ Քլօրինայ, ըստ որում յետինգ այդ վարեալ առանց ինչ պատճառանց և սոսկ առ մոլեգնութեան գիպաց մարտի, մինչ Բէլեանն Բորանէ գայ ի մարտ առ սէր և վրէժ քեռն հափափելոյ, և արգարեւ արեւման կուսութեան փառաց:

Թուի իմն թէ անդ իսկ ուր քերթողն ի բացուստ ի բաց ակնարկէ ի նախնեացս իւր, իսկ սափէ ի կրկնելոյ զոր առաջին քերթողքն առաջին միանգամ, և ինքն նորեկ ինչ կցորդեալ ի նոյնս, գերազանցէ զայլովքն: Անուշտ գեղեցիկ է փախուստ Հերմիտեայ ընդ անտառս, այլ գեղեցկագոյն և եւս ճշգրիտ նկարագիր հովուացն հայոց:

Ձնոյն մարթ է ասել զնմանութեանց, որ միշտ նոր գրեթէ և միշտ գեղեցիկ և ճշգրիտ...»:

Սրապիոն Հէքիմեան նկատմամբ նիւթի ընտրութեան կ'արտայայտուի նոյն ձեւով ինչպէս Պէշիկթաշեան: Քերթուածին ընդհանուր յօրինուածքին, զրուագներուն իւրաքանչիւր հետ ունեցած կապակցութեան մասին հիացմունք ունի միայն: Կ'ակնարկէ նմանութեանց կէտերուն՝ ցոյց տալով գեղարդանցութիւնը Բագրատունիին ըստ արտայայտութեան եղանակին և տուած զգալի զանազանութեան և ինքնատուութեան նոյն իսկ այն կէտերուն մէջ որոնց՝ ներշնչումը առած է ուրիշներէ:

Հէքիմեան կը կատարէ դիտողութիւններ, որոնց շատ հաւանաբար կարեւորութիւն տուած ըլլալու է Բագրատունի, բարեփոխելով ինչ ինչ բաներ:

Նշանակալից են նամակին վերջաւորութեան բառերը. գործը է «արժանի դրուատեաց և նիւթ պարծանաց ազգին թէ մարթի ազգն ճանաչել»:

Սր. Հէքիմեան կը նկատէ այդ գործը որպէս գրական արժանաւոր արտադրութիւն և պատիւ հայ ազգին համար. բայց կը տարակուսի որ ազգը պիտի կարենայ ստուգապէս ճանչնալ ու գնահատել զայն.

և արդարեւ յաջորդ սերունդին մէջ, երբ գրաբարի հմայքն ինկաւ և յայտնուեցան գրական նոր ուղղութիւններ և փոխուեցաւ դասական ճաշակը՝ Բագրատունիի Հայկ Դիւցազնը նկատուեցաւ անտանելի գրուած մը, անվերջանալի իր 604 էջերով, ու շատ քիչեր միայն համբերութիւնն ունեցան կարդալու զայն մէկ անգամ և այն ոչ լրիւ, թող թէ քննել, ուսումնասիրել և համեմատել: Այդ ճիգին պակասէն՝ համարեցան զայն լակոնական մակերեսային քննադատութեամբ մը ակնակալել, ակնկեղտն զիւցազներգութիւն, որ նպատակ ունի ոգեկոչելու հին հայ կեանքը տակ ունի ոգեկոչելու հին հայ կեանքը առանց աղբաւ ըլլալու իր այդ երգած շրջանը: Այսպէս արտայայտուած է Զարշրջանի Մեղրագետ ծաղկաբաղի վերջը զիւցազներգութեան վրայ խօսող գրիչը (թերեւ ինքը Զարդարեան), որակելով զայն «արուեստական և կեղծ, շքեղ՝ բայց ցուրտ, հոյակապոյց բայց անկենդան»:

Ի հարկէ Բագրատունի իր երգած շրջանէն դարերով հեռու ըլլալով՝ պիտի գործածէր լոկ իր երեւակայութիւնը ապրիլ տալու համար մեզի Հայկի օրերուն. և արդէն հոն է իր տաղանդին մեծութիւնն ալ, որով յաջողած է ստեղծել հոգեբանութիւնը այդ դարերուն, տալ կեանքն ու բարբերը այդ նախնական շրջանի դիւցազներուն: Վիրգիլիոս նոյնպէս հեռու է իր երգած Ենէասի դարէն ու բարբերէն. իր երգած Ենէասի դարէն ու բարբերէն. Օգոստոսի օրով ապրած այդ հեղինակն է պատկերացնել տմէն ինչ, նմանապէս թաւառող գրեթէ վրայ հակած իր ճակատը, վեր հանած է կոփերտոսի բանակին զիւցազները և ամբողջութեան միայն ձեւ և հաճելի կերպարանք տուած է իր երեւակայութեան թոյլը: Գրական գործի մը մէջ կարեւորը հեղինակին պատկերացնելու կարողութիւնն է, կարողութիւնը ստեղծելու տիպարներ ու տեսարաններ: Ռասին իր ողբերգութեանց տիպարներէն (բոլոր անոնց մէջ որ Եւրիպիդէսի գործերէն ներշնչուած են), ոչ մէկուն դարը և կեանքը ապրած է, բայց իր զգայնութեամբը զիտցած է վերարտադրել Անդրոմաքէի, Փեղբայի, Գոթոդիայի տիպարներն ու ոգին: Ալֆիերի իր Սաուդին մէջ ուժգնօրէն արտայայտած է հոգեբանութիւնը Դաւթին, Սաուդին, Գոթոդէյլ Պոլիկտոսի, Որատեան հօր և գաւակներու զիւցազնական ոգին տուած է մեզի առանց ապրելու անոնց ժամանակ:

Այս գործերէն ո՞րը կեղծ չէ (կեղծը առնուած ոչ ժամանակակից, ալ հին դէպքերու և ապրումներու որպէս ոգեկոչում, վերարտադրութիւն) ըլլալով դասական շրջանի հեղինակներու ստեղծագործութիւններ. բայց այդ գործերն են որ պատկան ազգերու փառքերը կազմած են, որովհետեւ հոն անոնք մարդկային հոգին, կիրքն ու տեսլականը երգած են մարդկայնօրէն:

Խրեմեան Հայրիկ հիացող մ'էր Բագրատունիին վրայ, անոր հայկական չափի գիտին առաջին գործադիրներէն մէկը, հիացող Հայկ Դիւցազնի, ինչպէս անոր բոլոր դասական թարգմանութիւններուն: Սուրբութեան և Զօպանեան կ'համարին զայն մեր դասական մեծ զիւցազներգակը. միայն ժամանակակից ներկայ սերունդն է որ կը հեռանայ այդ ուղիէն:

Մեղրագետի անգիտակից քննադատութեան արձագանգ կ'ըլլայ տարիներ վերջ Յ. Օշական, որու մասին պիտի անդրադառնանք յաջորդ մասով, ցոյց տալու համար իր դատաստաններուն բմահաճոյքը:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)